ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորավան համայնք
ՀՀ, Արմավիր մարզ, գ.Նորավան, 2-89-45 noravanigp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Նորավան համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորավան համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 16-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ԱՐՏԵՄ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ԷԴԳԱՐ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳՐԻՇԱ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

Համայնքի ղեկավար՝ **ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱԵԼՅԱՆ**

Հավելված

ՀՀ Արմավիրի մարզի

Նորավան համայնքի

ավագանու 2017 թվականի հունվարի 16-ի

Թիվ 1 հերթական նիստի թիվ 1 որոշման

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորավան համայնքի ավագանու 2017 թվականի թիվ 1 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ա.Միքաելյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորավան համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

զեկ. Ա.Միքաելյան

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորավան համայնքի 2016 թվականի բյուջեի ազատ մնացորդի հաստատման և 2017 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Ա.Միքաելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորավան համայնք
ՀՀ, Արմավիր մարզ, գ.Նորավան, 2-89-45 noravanigp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 2-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

Նորավան համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորավան համայնքի 2017-2021թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ԱՐՏԵՄ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ԷԴԳԱՐ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳՐԻՇԱ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

Համայնքի ղեկավար՝ **ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱԵԼՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Նորավան
համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 16-ի
N 2-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021թթ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Արթուր Միքաելյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 16 հունվարի 2017թ թիվ 2-Ն որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

Նորավան համայնք - 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը 4

2.Համայնքի իրավիճակի նկարագրություն 5

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրությունը..... 6

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը..... 7

2.3.Համայնքում իրականացվող ծրագրեր.....8

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները.....9

2.5.Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ.....10

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն.....12

3.Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում....13

3.1 Համայնքի զարգացման տեսլականը.....13

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....14

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 1 «Համայնքի փողոցների անավարտ գիշերային լուսավորության անցկացում».....14

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 2 «Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգում. փոսալցում և խճապատում» 15

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 3 «Կանգառների պատրաստում և տեղադրում».....16

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 4 «Աջակցություն համայնքի նոր թաղամասի գազաֆիկացմանը» 17

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 5 « Միջնակարգ պրոցի ֆուտբոլի դաշտի նորոգում» 18

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 6 «Աջակցություն ներհամայնքային ոռոգման ջրատարի վերանորոգմանը».....19

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 7 «Գերեզմանատան տարածքի բարեկարգում» 20

4.ՀՀՀԶԾ ֆինանսավորում 21

5. ՀՀՀԶԾ մոնիտորինգ.....22

Ներածություն

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԶԾ) համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները պետք է հստակ նկարագրված լինեն, իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումները պլանավորված հուն վերադրաձնելու նպատակով: ՀՀԶԾ շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի, որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները, մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ իրականացման այլընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղվեն:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Հնգամյա զարգացման ծրագրի մշակումը լուրջ աշխատանք է, որի կազմակերպմանն անհրաժեշտ է մոտենալ ամենայն պատասխանատվությամբ, կարևոր խնդիրներ են ծրագրի մշակման մեթոդական ցուցումների ապահովումը, ծրագրի առանձին բաժինների մշակման ժամանակացույցի սահմանումն ըստ կատարողների, ծրագրերի մշակման մեջ ներգրավված աշխատակիցների հրահանգավորումը, ծրագրի նախագծի ամփոփումն ու ավագանուն ներկայացնելը:

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Ողջունում եմ Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորավան համայնքի բնակիչներին, ավագանուն, համայնքապետարանի և համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների աշխատակիցներին:

Շնորհակալություն Ձեզ հնգամյա զարգացման ծրագրի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Նորավան համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի կազմումը և կատարումը գերակա խնդիր է մեր համայնքում, միջնակարգ դպրոցում, փոստում, առևտրի սպասարկման օբյեկտներում:

Համայնքում 2017-21թթ. նախատեսվում է կատարել մի շարք կարևոր աշխատանքներ՝ դրանք են. համայնքի նոր թաղամասի գազաֆիկացում, նոր թաղամասի փողոցային լուսավորության անցկացում, փողոցների խճապատում , դպրոցի ֆուտբոլի դաշտի բարեկարգում, կանգառների պատրաստում, գերեզմանատան տարածքի բարեկարգում և ոռոգման ջրերի ներքին ցանցերի նորոգում:

Խիստ կարևորություն եմ տալիս գիտելիքներով զինված, համակողմանի և ներդաշնակ զարգացած սերնդի ձևավորմանը: Կցանկանամ, որ այս գիտակցումով առաջնորդվեն բոլորը, դպրոցի յուրաքանչյուր մանկավարժ, քանզի մատաղ սերնդին է վստահված մեր ապագան՝ մեր վաղվա պետական, քաղաքական, մշակութային և հասարակական գործիչներին, կրթելու և հայեցի դաստիարակելու խնդիրը: Անհրաժեշտ է ապահովել այն գիտակցումը, որ այդ գիտելիքները պետք է ծառայեն ինչպես իրենց անձնական բարօրությանը, այնպես էլ ազգի ու հայրենիքի հզորացմանը:

Ծրագրի մշակմանը, քննարկմանն ու հաստատման աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում ավագանու, համայնքապետարանի, դպրոցի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ: Նշեմ նաև, որ բացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումից, համայնքապետարանը կարգավորում է տարվա ընթացքում ստեղծված խնդիրներն՝ ըստ առաջնահերթության: Լիահույս եմ, որ համատեղ ջանքերով կիրագործենք մեր բոլոր ծրագրերը:

Շնորհակալություն:

Համայնքի ղեկավար՝ Արթուր Միքաելյան

2.Համայնքի իրավիճակի նկարագրություն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորավան համայնքը գտնվում է մարզի հարավ-արևմտյան մասում, ծովի մակերևույթից 900մ բարձրության վրա, նախալեռնային գոտի է, գտնվում է Մերձարաքսյան և Ուրց-Կոտայք-Շամիրամ գոտիներում, մարզկենտրոնից հեռավորությունը 30 կմ է, մայրաքաղաքից՝ 45կմ: Գյուղի կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը՝ շոգ , հաճախ դիտվում է երաշտ, ցրտահարություն և կարկտահարություն:

Ունի 419.0 հա հողատարածք, համայնքը 80 տարեկան է:

Ժողովրդագրություն

Համայնքն ունի 1420 բնակիչ, այդ թվում՝

h/h	Տեղեկատվություն	մարդ
1	Տղամարդիկ	722
	Այդ թվում տղամարդիկ կազմում են բնակչության %	51
2	Կանայք	698
	Այդ թվում տղամարդիկ կազմում են բնակչության %	49
3	Թոշակառուներ	108
4	Փախստականներ	-
5	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	5
6	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	2
7	Հաշմանդամներ	10
8	Ընտանեական նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	21
9	Զոհվածների ընտանիքներ	-
10	Աշխատունակ բնակչության թիվը	855
11	Աշխատանք ունեցողների թիվը	100
12	Գործազուրկներ	15
13	Գրանցված ընտրողների թիվը	990
14	Ընտանիքների (ծխերի) թիվը	320

Բնակարանային տնտեսություն

Համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 8.21 հազ.քմ, համայնքում առկա են 230 առանձնատներ:Համայնքում կան 16 կիսակառույց առանձնատներ: Համայնքում կան բնակարանների կարիք ունեցող կարիքավոր ընտանիքներ, որոնց քանակը տարեցտարի աճում է, բազմաթիվ երիտասարդ ընտանիքներ ունեն տնամերձ հողամասեր, սակայն տնտեսական սուղ պայմանների պատճառով չեն կարողանում կառուցել առանձնատներ:

Հողօգտագործումը

Համայնքում հողի սեփականաշնորհման գործընթաց չի իրականացվել.

h/h	Տարածքի անվանումը	Տարածքի չափը/հա/
1	Համայնքի հողային տարածքը	419.0
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր	319.0
3	էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների համար	1.44
4	Ջրային տարածք	3.19
5	Բնակավայրի տարածք	94.5

2.1.Համայնքի ընդհանուր նկարագրությունը

Նորավան նշանակում է << նոր ավան >>:Համայնքը ստեղծվել է 1937թվականին նախկին Լուկաշին սովխոզին կից 3.0կմ հեռավորության վրա: Բնակչությունը ձևավորվել է Լուկաշին սովխոզի բնակիչներից, այլ շրջաններից և Իրանից տեղափոխված բնակիչներից:

Համայնքն առանձնացել է Լուկաշին սովխոզից 1991թվականին << Կառավարության որոշմամբ և մտել գյուղական բնակավայրի ցանկի մեջ;

Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ:

Համայնքը չի ունեցել ոչ մի հասարակական և արտադրական շինություններ:

Միայն համայնքի միջոցներով 2005 թվականին կառուցվել է համայնքապետարանի շենքը և 2009 թվականին շահագործման է հանձնվել նորակառույց դպրոցի շենք՝ << Կառավարության ծրագրով:

Նորավան համայնքն իր վարչական տարածքով սահմանակից է ք. Արմավիրին և Լուկաշին համայնքին:

Համայնքում չի գործում մանկապարտեզ, մշակույթի տուն և սպորտային կառույցներ՝ համապատասխան շինությունների բացակայության պատճառով:

Նորավան համայնքում 1996 թվականից իրականացվել է մեկ խորքային հորի հորատում, մեկ խորքային հորի վերանորոգում, շուրջ 5.0 կմ ոռոգման ցանցի վերակառուցում, գազաֆիկացման աշխատանքներ՝ 0.8 կմ երկարությամբ, ներհամայնքային ճանապարհների վերանորոգում, բոլոր փողոցերում լուսավորության անցկացում , կանաչապատման աշխատանքներ դպրոցի և գերեզմանատան տարածքներում և մանկական հրապարակի կառուցում համայնքապետարանի հարակից տարածքում:

Համայնքում խմելու ջուրը շուրջորյա է և կանոնակարգված, սպասարկվում է <<Նոր Ակունք>> ՓԲԸ-ի կողմից:

Համայնքի 185 բնակելի տներ գազաֆիկացված են:

Աղբահանությունը համայնքում իրականացվում է շաբաթական մեկ օր հաճախականությամբ համայնքի բյուջեի միջոցներով:

Համայնքում խաղողագործությունը և պտղաբուծությունը զարգացման միտում ունեն: Աճում է նաև ջերմոցային տնտեսությունների թիվը:

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Համայնքի 2016թ բյուջեի եկամուտների և ծախսերի մասին տեղեկություններ /հազ.դրամ/

	Եկամուտների տեսակները	Տարեկան	
		պլան	կատարող.
1.	Հողի հարկ	3350.0	3767.1
2.	Գույքահարկ	2250.0	2314.4
3.	Տեղական տուրք	160.0	384.1
4.	Տեղական վճար	376.0	375.9
5.	Հողի վարձակալության վճար	376.0	375.9
8.	ՀՀ պետական բյուջեից դոտացիա	20958.9	20958.9
9.	ՀՀ պետական բյուջեից համայնքի բյուջեին տրամադրվող այլ դոտացիա	82.1	82.1
10.	Տարեսկզբի ազատ մնացորդ	4391.3	4391.3
11.	Հողի օտարումից եկամուտ	4682.8	--
	Ընդամենը	**36251.1**	**32273.8**

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 41.9%:

Համայնքում զբոսաշրջության հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ չկան:

Համայնքն ունի, մեկ երկհարկ միջնակարգ դպրոց. ներկայումս ունի 190 աշակերտ նախատեսված է 250 աշակերտի համար, ուսուցչական կոլեկտիվը բաղկացած 40 հոգուց: Դպրոցում գործում է նախակրթարան՝ 15 սանով:

Համայնքում ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 21 մարդ:

Համայնքում առկա աշխատուժի միայն 80%-ն է զբաղվում գյուղատնտեսությամբ, 10%-ը աշխատում է այլ հիմնարկ ձեռնարկություններում և միայն 10%-ն է աշխատանք փնտրում:

2.3.Համայնքում իրականացվող ծրագրեր

Նորավան համայնքի տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող /շարունակվող/ հանրապետական, մարզային ծրագրեր և միջոցառումներ նախատեսված չեն:

Չեն նախատեսված նաև հարևան համայնքների հետ համատեղ, գալիք հինգ տարիների համար, նախատեսվող (շարունակվող) միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրեր և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող (շարունակվող) ծրագրեր և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրեր:

Չեն նախատեսված նաև համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող (շարունակվող) ծրագրեր, ներդրումներ և միջոցառումներ:

Պետության կողմից իրականացվող ծրագրերի ներդրումը խթան կհանդիսանա համայնքի զարգացման համար /սակայն դեռևս այն նախատեսված չէ/:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

2017-2021թթ. սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրով ըստ առանձին բնագավառների նախատեսվող ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների համառոտ ամփոփագիր

N	Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը	Ծավալը	Ֆինանսական միջոցների անհրաժեշտ քանակը /հազ.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրները			Կատարման ժամկետները					Պատասխանատու
				համայնքի բյուջե	դրսից կամքով	այլ/դեպ.բյուջե /մլն դրամ/	2017թ. ծավալը ֆին.միջոց	2018թ. ծավալը ֆին.միջոց	2019թ. ծավալը ֆին.միջոց	2020թ. ծավալը ֆին.միջոց	2021թ. ծավալը ֆին.միջոց	
1	Համայնքի փողոցների անավարտ գիշերային լուսավորության անցկացում /մ/	300	600.0	600.0	-	-	150.0	150.0	100.0	100.0	100.0	համայնքի վարչություն
2	Ներհամայն-քային ճանապահ-ների և փողոցների բարեկարգում. փոսալցում և խճապատում /քառ.մ/	2500	5000.0	500.0	-	-	1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0	համայնքի վարչություն
3	Համայնքում կանգառների պատրաստում և տեղադրում /հատ/	4	800.0	800.0	-	-	200.0	200.0	200.0	200.0	-	համայնքի վարչություն
4	Աջակցություն համայնքի նոր թաղամասի գազիֆիկացմանը /մետր/	500	6000.0	2000.0	4000.0	-	-	-	1500.0	1500.0	3000.0	համայնքի վարչություն

5	Միջնակարգ պրոցի ֆուտբոլի դաշտի վերանորոգում /քառ.մ/	1000	800.0	8 00.0	-	-	-	200.0	200.0	200.0	200.0	համայնքի տեղական
6	Աջակցություն ներհամայնքա-յին՝ ոռոգման ջրատարի վերանորոգման /մետր/	4000	100000.0	10000.0	90000.0	-	20000.0	20000.0	20000.0	20000.0	20000.0	համայնքի տեղական
7	Գերեզմանատան տարածքի բարեկարգում /մետր/	500.0	5000.0	1000.0	4000.0		1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0	համայնքի տեղական

2.5.Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

Նորավան համայնքի սոցիալ–տնտեսական զարգացման համար խոչնդոտները և առնվազն դժվարությունները կարող են առաջանալ ներքոհիշյալ խնդիրներից.

Համայնքում առկա են գյուղատնտեսական նշանակության տասնյակ հեկտարներով վարելահողեր, որոնք ոռոգման ջրի լիարժեք առկայության դեպքում կմշակվեին և համայնքում կբացվեր նոր աշխատետեղեր՝ կբարելավվեր համայնքի բնակիչների սոցիալական վիճակը:

Մանկապարտեզի բացակայությունը խոչընդոտում է նախատպրոցական երեխաների դաստիարակության աշխատանքներին:Ծնողներին լրացուցիչ դժվարություններ է ստեղծում աշխատանքում և երեխաների դաստիարակության գործում:

Համայնքում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման համար խոչնդոտներ են հանդիսանում մշակույթի տան բացակայությունը, դպրոցում և համայնքապետարանում եղած սակավ ֆինանսական միջոցները, որոնց առկայության դեպքում կբացվեին խմբակներ, կանցկացվեին դասընթացներ, կկազմակերպվեին զբոսանքներ դեպի Հանրապետության տեսարժան վայրեր, բնության գիրկ, մատաղ սերնդին՝ դեռահասներին ու պատանիներին կծանոթացնեին հայրենի բնությանը, գեղատեսիլ վայրերին:

Համայնքում բնակչության սոցիալական պաշտպանություն գործընթացը, ավելի նպատակային, կազմակերպելու համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ, որոնք կուղղվեն բնակչության բարեկեցության ապահովության համար՝ համայնքի ընտանիքներում յուրաքանչյուր ծնվածների, մահացածների, հիվանդությունների դեպքում կցուցաբերվեր դրամական օգնություն: Հենաշարժական խնդիրներ ունեցող բնակիչներին համապատասխան սայլակներով և սարքավորումներով ապահովելու համար ունենալ միջոցներ: Համայնքում ուսումնական հաստատությունների, խանութների, բուժ ամբուլատորիայի, մուտքերը

հարմարեցնել հաշմանդամության սայլակներին համապատասխան: Նման միջոցառումները կնպաստեն հաշմանդամների մասնակցությանը հասարակական կյանքում:

Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման համար դպրոցում իրականացվող պարապմունքներից և միջոցառումներից զատ նպատակահարմար է բնակչության շրջանում ակտիվացնել, կազմակերպել և խրախուսել բազմաթիվ այլ սպորտային խմբակներ, հավաքներ, մրցույթներ, պարապմունքներ:

Համայնքում բնակարանային շինարարության խթանման նպատակով համայնքի բնակիչներն, ովքեր ունեն տնամերձ հողամասեր՝ ցանկանում են կառուցել բնակելի տներ, փաստաթղթերի ձեռք բերումը, որը վերաբերվում է տարբեր հիմնարկություններից ստացվող թույտվություններին՝ դարձնել էլ ավելի դյուրին և հասնելի:

Համայնքում անհրաժեշտություն է կանգառների պատրաստումը, նոր այգիների հիմնումը, աղբահանության հաճախակիացումը, համանքային գերեզմանատների պահպանումը՝ ցանկապատումը, բարեկարգումը, կանաչապատումը, որոնց համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ:

Համայնքի նորակառույց թաղամասի գազաֆիկացման աշխատանքերի ավարտին հասցնելը:

Համայնքում պետության պաշտպանության իրականացումը, աղետների ռիսկերի նվազեցումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությունը ու քաղաքացիական պաշտպանությունը իրականացնելու, կազմակերպելու համար անհրաժեշտ է տեխնիա և տրանսպորտային միջոցներ:

Ոռոգման ջրատարի ներհամայնքային համակարգի մի մասը բետոնյա կիսախողովակներ են, մյուս մասը՝ հողային հունով առուներ, որի պատճառով ունենում ենք ոռոգման ջրի կորուստ, հետևապես ստացվում է մշակաբույսերի անարդյունավետ աճեցում, բերքատվության կորուստ:

Համայնքում շրջակա միջավայրի պահպանության համար պակասում են համայնքում և դպրոցում կազմակերպվող զրույց զեկուցումները, դասընթացները, որն էլ ավելի կխթաներ բնակչության ինքնագիտակցմանը՝ շրջակա միջավայրի նկատմամբ անհատի վերաբերմունքին:

Համայնքում բնակչության ծնելիության և բազմազավակության խթանման համար պակասում է համայնքի բյուջեից նախատեսված գումարները, օրինակ՝ յուրաքանչյուր նորածնի մորը 50000 դրամ տրամադրելը, բազմազավակ մայրերին դրամական օգնություն տրամադրելը:

Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացման, արդյունավետ ու մատչելի բժշկական սպասարկման պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ֆինանսական մասհանումներ:

Համայնքում յուրաքանչյուրի համամարդկային արժեքների ազատ և անկաշկանդ հաղորդակցման համար անհրաժեշտ է մշակութային միջոցառումների քանակական և որակական ավելացումը՝ ֆինանսական հնարավորության դեպքում:

Համայնքում չի իրագործվում բարեգործություն, որը կխթաներ համայնքում մշակութային, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման և ֆինանսական անկախության գործում:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Համայնքի աշխարհագրական դիրքը 2.Համայնքի վարչական տարածքում անհատ ձեռներեցների, խանութների և նրանց արդյունավետ աշխատանքը 3.Համայնքում գազի, էլեկտրականության, խմելու և ոռոգման ջրերի բավարար մատակարարումը 6.Երկաթգծին և սպառման շուկային մոտ լինելը:	1.Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հողակտորների անմշակ լինելը 2.Մեծ թվով սոցիալապես անապահով ընտանիքների առկայությունը 3.Համայնքի հողային հունով ոռոգման առուները 4.Համայնքում կանաչ գոտիների պակասը 5.Իրականացվող երիտասարդական ծրագրերի պակասը 6.Հողի հարկի գանձումների դժվարությունները 7.Համայնքի բնակիչների անվճարունակութուն 8.Փողոցների ասֆալտապատում,վերանորոգում 9. Ոռոգման մայր ջրագծի վերջնամասում գտնվելը: 10. Բնակլիմայական պայմաններ /ցրտահարություն և կարկտահարություն/ 11. Մանկապարտեզի և մշակույթի տան շենքային պայմանների բացակայություն 12. Դպրոցի ներքին հարդարանք, վերանորոգում
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
1.Մրգերի և բանջարեղենի վերամշակման կետ 2.Ջերմոցային տնտեսության զարգացում 3.Խաղողագործության, պտղաբուծության զարգացում	1.Բնակլիմայական պայմանները՝ ա/ երաշտը բ/ ցրտահարությունը գ/ կարկտահարությունը 2.Բնակչության արտագաղթը

3.Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլականը

Նորավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքերի իրականացնան արդյունքում՝ համայնքում անհատ ներդրողների հետ համագործակցությամբ կզարգանան ջերմոցային տնտեսությունները ՝ 1.0հա, որտեղ կաճեցվեն պոմիդոր, վարունգ բանջարեղեններ: Նշված աշխատանքների կատարման համար կներդրվի 200 000 000 << դրամ և արդյունքում կստեղծվեն մի քանի տասնյակ աշխատատեղեր: Համայնքը կսկսի կայուն զարգանալ, յուրաքանչյուր աշխատող կստանա ամսական մոտ 100 000 - 150 000<< դրամ աշխատավարձ, կավելանա բնակչի իրական եկամուտները, կկրճատվի աղքատությունը:

Համայնքի կենտրոնական փողոցների և նոր թաղամասի գիշերային լուսավորության անցկացման, ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգման՝ փոսալցման և խճապատման, կանգառների պատրաստման և տեղադրման, նոր թաղամասի գազիֆիկացման, միջնակարգ դպրոցի ֆուտբոլի դաշտի նորոգման, ներհամայնքային ոռոգման ջրատարի նորոգման և գերեզմանատան տարածքի բարեկարգման համար համայնքի բյուջեից կծախսվի 20.2մլն դրամ: Ցուցանիշների արժեքները սահմանվել են տարեկան կտրվածքով:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացմամբ ակնկալվում է համայնքի բնակիչների իրական եկամուտների 10%-ի աճ, իսկ ոռոգման համակարգի վերակառուցման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը կբարձրանա 25%-ով:

Աղքատության շեմից ցածր գտնվող տնտեսությունների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին՝ 10% :

Համայնքի սեփական եկամուտների աճը՝ 26.4%:

Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը /չպայմանավորված բնական աճով/ նախորդ տարվա համեմատ՝ 1%:

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 1

«Համայնքի փողոցների անավարտ գիշերային լուսավորության անցկացում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գիշերային լուսավորության անցկացում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	150 000	150 000	100 000	100 000	100 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			75000	75000	50000	50000	50000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			75000	75000	50000	50000	50000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Լամպերի ձեռք բերում 1.2. Լարերի,մալուխների ձեռք բերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Մոնտաժման աշխատանքներ 2.2. Անցկացված լուսավորության փորձարկում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 300 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 300 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 600 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Նյութեր և սարքավորումներ, աշխատուժ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Փողոցների գիշերային լուսավորության անցկացում						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում նոր թաղամասի, կենտրոնական փողոցների անավարտ գիշերային լուսավորության անցկացման արդյունքում գյուղի փողոցները լիովին կլուսավորվեն, կակտիվանա, կհեշտանա բնակչության տեղաշարժը գիշերային ժամերին, գույքի պահպանությունը կբարելավվի, կբարձրանա բնակչության տրամադրությունը:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 2

«Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգում. փոսալցում և խճապատում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	ճանապահների և փողոցների բարեկարգում. փոսալցում և խճապատում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	1000000	1000000	1000000	1000000	1000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			500000	500000	500000	500000	500000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			500000	500000	500000	500000	500000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Մանրախճի,ավազի ձեռք բերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Մանրախճի փռում 2.2 Մանրախճի հարդարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 500 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 500 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1 000 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ճանապահների և փողոցների բարեկարգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգման՝ փոսալցման, խճապատման աշխատանքների ավարտից հետո կբարելավվի բնակչության նպատակների իրագործումը. նախադպրոցականների, դպրոցականների հաճախումները դպրոց, մանկապարտեզ կհեշտանա: Ավտոմեքենաների օգտագործումը արդյունավետ կլինի, բնակչության աշխատանքի, հանգստի, կուլտուր կենցաղային հարցերի կարգավորման համար բավարար վիճակ կստեղծվի :						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 3

«Կանգառների պատրաստում և տեղադրում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Կանգառների պատրաստում, տեղադրում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	200 000	200 000	200 000	200 000	-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			100 000	100 000	100 000	100 000	-
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			100 000	100 000	100 000	-	-
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. մետաղական պրոֆիլների ձեռքբերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. քարի ձեռք բերում 2.2 թիթեղների ձեռք բերում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 100 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 100 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 200 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Կանգառների պատրաստում ու տեղադրում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում կանգառների պատրաստման ու տեղադրման արդյունքում՝ հասարակական տրանսպորտին սպասելու ընթացքում, բնակչության բոլոր շերտերը՝ այդ թվում նաև հաշմանդամները կանգառներում կարող են պաշտպանվել արևից, անձրևից և մասամբ էլ ցրտից, կարող են տեղեկատվություն ստանալ երթևեկության ժամերի մասին:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 4

«Աջակցություն համայնքի նոր թաղամասի գազաֆիկացմանը»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Աջակցություն համայնքի նոր թաղամասի գազիֆիկացմանը						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-	-	1500000	1500000	3000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	-	750 000	750 000	1500000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	-	750 000	750 000	1500000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. համաֆինանսավորում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 3 000 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 3 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 6 000 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Աջակցություն համայնքի նոր թաղամասի գազաֆիկացմանը						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի նոր թաղամասի գազիֆիկացման արդյունքում նորաստեղծ թաղամասում նորակառույց անհատական տները կգազաֆիկացվեն, նորմալ հունով կգնա տների լոկալ ջեռուցման անցկացման հարցերը, կբարելավվի կենցաղային պայմանները, կբարձրան բնակչության կենցաղային հարցերի կարգավորման նկատմամբ բավարարվածությունը և տրամադրությունը:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 5

«Միջնակարգ պրոցի ֆուտբոլի դաշտի նորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Դպրոցի ֆուտբոլի դաշտի նորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցա-նիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-	200 000	200 000	200 000	200 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցա-նիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	100 000	100 000	100 000	100 000
	2.						
	Ցուցա-նիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	100 000	100 000	100 000	100 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1. Ավազի ձեռք բերում 1.2. Փոսալցում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Տեխնիկայի վարձակալում 2.2 Կանաչապատում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 400 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 400 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 800 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Դպրոցի ֆուտբոլի դաշտի նորոգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում միջնակարգ դպրոցի ֆուտբոլի դաշտի նորոգամբ կբարելավվի ֆիզիկական կուլտուրայի զարգացումը հատկապես ,,ֆուտբոլ,, սպորտաձևի ուղղությամբ: Առողջ ապրելակերպի խրախուսման համար բարենպաստ պայմաններ կստեղծվեն՝ բնակչության շրջանում ակտիվացնելու և կազմակերպելու հավաքներ, մրցույթներ և պարապմունքներ:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 6

«Աջակցություն ներհամայնքային ոռոգման ջրատարի վերանորոգմանը»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Աջակցություն ոռոգման ջրատարի վերանորոգմանը						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	20000000	20000000	20000000	2000000	20000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			50000000	50000000	50000000	5000000	50000000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			50000000	50000000	50000000	50000000	50000000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1. Կիսախողովակների ձեռքբերում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Տեխնիկայի վարձակալում 2.2						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 50 000 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 50 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 100 000 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ոռոգման ջրատարի վերանորոգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային հողային հունով ոռոգման ջրատարի վերանորոգման արդյունքում ոռոգման համակարգի վերակառուցման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը կբարձրանա մշակաբույսերի բերքատվությունը կբարձրանա:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 7

«ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գերեզմանատան տարածքի բարեկարգում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	1000000	1000000	1000000	1000000	1000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			500000	500000	500000	500000	500000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			500000	500000	500000	500000	500000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ավազի ձեռք բերում, մետաղական ցանցի և խողովակի ձեռքբերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. ցեմենտի ձեքբերում 2.2 խողովակների ամրացում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր ՝ 2 500 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 2 500 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 5 000 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Գերեզմանատան տարածքի բարեկարգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Գերեզմանատան տարածքի բարեկարգման աշխատանքները կբերեն տարածքի կանաչապատման, սանիտարական վիճակի բարելավման: Կսահմանափակվի բոլոր տեսակի կենդանիների մուտքը գերեզմանատան տարածք:						

4.ՀՀՀԶԾ ֆինանսավորում

Համայնքի 2016թ. տարեկան բյուջեի ընդհանուր եկամուտները հաշվարկել է 27177,0 ՀՀ դրամ, ընդհանուր եկամուտների մեջ՝ սեփական եկամուտները 6136,0 ՀՀ դրամ կամ 22,5%:

Համայնքում կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Արմավիրի մարզի Նորավան համայնքում ունի հետևյալ պատկերը.

h/h	Եկամուտների տեսակը	2016 փաստացի	2017 նախատեսված	2018 նախատեսված	2019 նախատեսված	2020 նախատեսված	2021 նախատեսված
1.	Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	27177.0	27894.9	27936.0	28936.0	29936.0	30936.0
2	Եկամուտներ	5760.0	6560.0	6560,0	6560,0	6560,0	6560,0
2.1	Ընթացիկ եկամուտներ	-	-	-	-	-	-
1.	Հարկային եկամուտներ	5600.0	6400.0	6400.0	6400.0	6400.0	6400.0
1.1	Հողի հարկ	3350.0	4000.0	4000.0	4000.0	4000.0	4000.0
1.2	Գույքահարկ	2250.0	2400.0	2400.0	2400.0	2400.0	2400.0
1.3	Եկամտահարկ	-	-	-	-	-	-
1.4	Այլ հարկային եկամուտներ	-	-	-	-	-	-
2	Տուրքեր	-	-	-	-	-	-
2.1	Պետական տուրքեր	-	-	-	-	-	-
2.2	Տեղական տուրքեր	160.0	160.0	160.0	160.0	160.0	160.0
3	Ոչ հարկային եկամուտներ	376.0	376.0	376.0	376.0	376.0	376.0
3.1	Համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վճարներ	376.0	376.0	376.0	376.0	376.0	376.0
3.2	Գույքի վարձակալությունից եկամուտներ	-	-	-	-	-	-

3.3	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	-	-	-	-	-	-
3.4	Տեղական վճարներ	-	-	-	-	-	-
3.5	Այլ ոչ հարկային եկամուտներ	-	-	-	-	-	-
3.6	Եկամուտի կապիտալի գործառնություններից	-	-	-	-	-	-
3.7	Պաշտոնական տրանսֆերտներ	-	-	-	-	-	-
3.8	Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ դոտացիա/	21041.0	20958.9	21000.0	22000,0	23000,0	24000,0
3.9	Պաշտոնական կապիտալից տրանսֆերտներ դոտացիա/	-	-	-	-	-	-

5. ՀՀԶԾ մոնիտորինգ

Իրականացման փուլում գտնվող ծրագրերը պետք է մոնիթորինգի ենթարկվեն: Մոնիթորինգը կառավարչական գործիք է, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնել: Մոնիթորինգն իրականացվում է համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով: Համեմատության միջոցով հնարավոր է լինում չափել ծրագրի առաջընթացը, հաջողության աստիճանը, ծրագրով պայմանավորված փոփոխությունները կամ գնահատել ծրագիրն իրականացնողի կատարողականը: Մոնիթորինգն, առաջին հերթին, անհրաժեշտ է համայնքի ղեկավարությունը, որպեսզի հնարավոր լինի ձեռքը պահել Ծրագրի «զարկերակի» վրա:

ՀՀԶԾ մոնիթորինգի պլանը ներկայացված է աղյուսակ 1 - ում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորավան համայնք
ՀՀ, Արմավիր մարզ, գ.Նորավան, 2-89-45 noravanigp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 3-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և 54-րդ հոդվածով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով՝

Նորավան համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորավան համայնքի 2016 թվականի բյուջեի ազատ մնացորդը և 2017 թվականի բյուջեում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ԱՐՏԵՄ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ԷԴԳԱՐ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳՐԻՇԱ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

Համայնքի ղեկավար՝ **ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱԵԼՅԱՆ**

Հավելված

ՀՀ Արմավիրի մարզի

Նորական համայնքի

ավագանու 2017 թվականի հունվարի 16-ի

Թիվ 1 հերթական նիստի թիվ 3-Ն որոշման

Հաստատել տարեսկզբի մնացորդը.

1. Վարչական բյուջեի ազատ մնացորդը 3041901 դրամը, ուղղել ֆոնդային բյուջեի 2333945 դրամի վրա:
2. Ընդամենը ֆոնդային բյուջեի ազատ մնացորդը 5375846 դրամ:

1-1-1 բաժին-դասի-խմբի 5113 հոդվածին ավելացնել 800.0 հազար դրամ

1-1-1 բաժին-դասի-խմբի 5121 հոդվածին ավելացնել 3275.8 հազար դրամ

1-1-1 բաժին-դասի-խմբի 5122 հոդվածին ավելացնել 800.0 հազար դրամ

1-1-1 բաժին-դասի-խմբի 5129 հոդվածին ավելացնել 500,0 հազար դրամ